Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Հովվապետական այցելությունից հետո, առաջիկա կիրակի օրը, փետրվարի 8-ին, հրնաթացս Մայր Տաճարում մատուցված Սուրբ և անմահ Պատարագի, հոգեհույզ քարոզ խոսեց Գարեգին Ա Կաթողիկոսը՝ համաժամանակյա մանրամասնելով նաև Եգիպտոս և Գերմանիա կատարած իր անդրանիկ հովվապետական այցելության նպատակներն ու արդյունքները.

«Ես եմ հացն կենաց» (Հովհ. Զ, 35):

«Ես եմ կյանքի հացը»

Կարճ, կտրուկ, իմաստով ջինջ բառեր, որոնք արտասանվեցին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի չրթներից, երբ Նա տեսավ, որ ժողովուրդը, որ եկել էր իրեն ունկնգրելու, հաց էր փնտրում: Հացը Նա տվել էր նրանց, այն հրաշապատում դրվագում պատմված առակի համաձայն, որով 2 նկանակով և 5 ձկով ավելի քան 5000 մարդկանց կերակրեց. Ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս: Բայց հացը հաց է պահանջում: Մեկ անգամ կշտացողը հացից հավիտենորեն կշտացած չի լինի: Եվ նրանք, ովքեր ճաշակեցին Հիսուսի տված ֆիզիկական հացից, նրանք դարձյալ կարոտ ունեին հացի, երբ Նա նավով կափառնայում գնաց, ժողովուրդը հսկա բազմությամբ հետևեց և փնտրեց Նրան, և երբ Նա տեսավ, որ նրանք Իր մոտ եկան, հարցրեց նրանց. «Դուք ինչո՞ւ եկաք ինձ մոտ, հրա՞շք փնտրելու, ո՛չ, այլ եկաք հաց փնտրելու»; Եվ այդ ժամանակ ասաց. «Հացը երկնքից՝ Աստծուց է գալիս»: Նրանք ասացին. «Մովսեսը հացը բերեց մանանայի ձևով, դու ի՞նչ ես անելու, որ մենք քեզ հավատանք»: «Մովսեսը չէր, որ մանանան տվեց երկնքից, այլ իմ Հայրն էր երկնավոր»: Եվ այն ժամանակ ասաց, որ ով կճաշակի այդ հացից, այդ անձը հավիտենապես կշտացած, հագեցած կլինի: «Տուր մեզ այդ հացից», ասացին: Եվ այդ ժամանակ էր, որ արտասանեց այդ կտրուկ և սրտամոտ բառերը. «Ես եմ հացն կենաց, ով ինձ հետևի, ով իմ խոսքը կատարի, նա ճաշակած կլինի հավիտենական ուժ ունեցող հացից»:

Սիրելի հավատացյալներ, մեր ժողովուրդը դարեր շարունակ այդ հացը ճաշակելով է, որ անմահության ճանապարհով քայլեց և հազարամյակներ ապրում է այդ հացի զորությամբ: Այսօր ես չեմ ուզում, ինչպես ուրիշ անգամներ արել եմ, հացի գաղափարը վերլուծել, այսօր ես ուզում եմ ձեզ հետ կիսել ըստ մեր և մեր երջանկահիշատակ նախորդի սովորության համաձայն, մեր Հովվապետական այցելությունից հետո, մեր խոհերը և մեր մտածումները մեր ժողովրդի, մեզ ապրող և միշտ ապրեցնող զորությունների, գաղափարների, արժեքների, մեկ խոսքով մեր ժողովրդին անմահության հացը տվող գաղափարների և հավատքի մասին:

Ես այդ հացը տեսա: Այդ հացը տեսա մեր ժողովրդի կյանքում, Եգիպտոսի մեջ, Կահիրեի և Ալեքսանդրիայի մեջ: Ես այդ հացը տեսա Գերմանիայի բազում քաղաքների մեջ սփռված, տարածված մեր ժողովրդի զավակների կյանքում: Ծորենից ստացված հացը, ամեն տեղ նույնն է, այստեղ՝ Գերմանիայում կամ Եգիպտոսում: Բայց այն հացը, որ ես տեսա մեր ժողովրդի կյանքում, այդ հացը Քրիստոսի հացն է՝ Իր անձի մեջ

մարմնացած: Նրնկու տեսակ հաց տվեց Քրիստոս, մեկ այն, որ այլուրից է պատրաստված, և մյուսը այն, որ Ինքն էր, և որ մենք ստանում ենք Ավետարանի, հաղորդության աղոթքի միջից:

Ես ուզում եմ այսօր, այս սրբազնաստուրբ խորանի վրա, երախտագիտության մեր աղոթքը մատուցել, ու այն հացը, որ ես տեսա Քրիստոսի անձի միջից և մեր սուրբ հայրերի և մեր Առաքելական եկեղեցու միջից բխված, խմորված, եփված չնորհակալություն հայտնել և հայցել Աստծուց, որ այդ հավատքի հացը չպակասեցնի մեր ժողովրդի կյանքի սեղաններից:

Դարեր չարունակ և ոչ թե մի քանի տասնամյակներ, այդ ժողովուրդը ապրել է Եգիպտոսում: Այստեղ ես պատմությունը չի, որ պիտի ասեմ ձեզ, բայց 11-րդ դարում, այդ հողի վրա, Հայոց Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսն է ոտքը դրել: Այնտեղ եղել է Կաթողիկոսի ներկայացուցիչը՝ փոխանորդը, և այնտեղ շարունակվել են եկեղեցու ծառայությունները մատուցվել մեր ժողովրդին, բազում եկեղեցիներ են շինվել, նրանցից ոմանք իբրև քար կորել են, բայց մնացել են նրանք, որոնք մեր ժողովուրդին պահել են իր հավատքի հույսով: Եղել է ժամանակ, երբ այդ ժողովուրդը մեծ բազմությամբ ներկա է գտնվել Եգիպտոսի Հավիտենական հողի վրա, եղել է ժամանակ, երբ թիվը նվազել է, ինչպես այսօր: Բայց ինչ փույթ, թվի առավելությունը կամ պակասությունը, կարևորն այն է, ով որ էլ լինի, ինչքան թիվ էլ որ հաշվի, այդ համայնքը, այդ հավաքականությունը ղուրկ չմնա հավատքի հացից՝ մարմնացած Քրիստոսի անձի մեջ: Իսկ Գերմանիայի մեջ ապրող մեր ժողովուրդը, նոր հաստատված ժողովուրդ է՝ Թուրքիայից, Սիրիայից, Պարսկաստանից, Լիբանանից և Հայաստանից: Նրանք հաց են փնտրում՝ նյութեղեն հաց և հացն առատ է Գերմանիայի մեջ: Բայց ես տեսա, որ նրանք նոր եկեղեցի են կառուցում, նոր համայնքներ են կազմում, ես այդ հացը տեսա Հայց. Ս. Եկեղեցու խորաններից: Այդ հացն ենք մենք ճաշակում ամեն անգամ, երբ Ավետարանն է քարոզվում, ինչպես այս պահին, ես ջանում եմ հացի համը փոխանցել ձեզ իմ տկար լեզվով:

Այդ հացն ենք ճաշակում ամեն անգամ, երբ այս երգչախումբը, կամ բոլոր երգչախմբերը մեր եկեղեցիներում հայոց չարականներ են ընծայում մեզ, որպես հոգևոր սնունդ: Այդ հացն ենք ճաշակում, երբ մեր եկեղեցու հայրերի գրվածքներն ենք կարդում, մեկնաբանում և այժմեականացնում մեր ժողովրդի արդի կյանքի մեջ: Այդ հացն է, որ մենք ճաշակում ենք ամեն անգամ, երբ մի հայ երեխա Այբ, Բեն, Գիմ-ն է սովորում, Մեսրոպի խմորով մեր ժողովրդին ընծայված հացով: Այդ հացն ենք ճաշակում ամեն անգամ, երբ տպարաններից գրքեր են դուրս գալիս, և մենք ընթերցումով ու հաղորդակցությամբ սնվում, երջանկանում ենք այն արժեքներով, որ այդ գրի ու գրականության միջից մեզ ընծայվում է: Այդ հացն ենք մենք ճաշակում ամեն անգամ, երբ մեր մշակույթի արտահայտություններն ենք գտնում մեր հայ երաժշտության, հայոց քանդակագործության, հայոց ճարտարապետության միջից:

Նայում ենք Հռիփսիմեի տաճարին, մեր աչքերը միայն գիծ և ձև չեն տեսնում, հոգի են տեսնում այդ քարերից այն կողմ, որովհետև այդ քարերի մեջ հոգի է դրվել: Մենք այդ հացն ենք ճաշակում, երբ ամեն անգամ քով-քովի ենք գալիս, մեկ սիրտ ու մեկ հոգին մեր ամբողջ ազգության ու եկեղեցու միությունն ենք զգում մեր անհատ անձերի մեջ: Այդ միասնությունը, այդ հավաքական հոգին է եկեղեցին ու ազգը: Եվ նա, որ առանձնաբար, անհատաբար ինքն իրեն համար է ապրում, նա մարդ չէ,

մարդը մարդ է մարդով: Առանց մարգի մարդը, իբրև անհատ, իր իսկ գերեզմանն է: Երբ այդ հացը բաժանվում է, երբ անձնապես չեն ճաշակում ձեզանից ոչ մեկ անձ անձնապես չի միայն ճաշակում, այլ հաղորդվում ենք միմյանց հետ: Նույն հավատն ենք բաշխում, նույն գաղափարն ենք կիսում, նույն հեռանկարներով ենք ապրում, նույն հոգով ենք ներշնչվում, այդ հացը միացուցիչն է: Եթե ֆիզիկական հացը, հողից դուրս եկած հացը, մեր ֆիզիկական մարմնեղեն դոյության համար անհրաժեշտ է իբրև անհատ, հոգևոր հացի տարբերությունը այն է, որ նա անհատից անդի նաև բաժանվում է ընդհանրությանը, հավաքականությանը, ամբողջ մեր ժողովրդին: Ես այսօր դրա համար այս խորանի վրա ընծայում եմ որպես նվեր առ Աստված մեր այդ հացի պատկերը, որ ես գտա կենդանի արտասահմանյան մեր ժողովրդի զավակների կյանքում՝ Եգիպտոսում և Գերմանիայում: Ես պիտի նաև ավելացնեմ, որ օտար կրոնների՝ իսլամական և քրիստոնեական դեկավարներ, ներկայացուցիչներ, մեր ժողովրդին արժեք են տալիս, երբ այդ ժողովուրդը իր կյանքում արժևորում, թարմացնում, կենդանացնում է Քրիստոսի հացը: Երբ տեսնում են մեր ժողովրդին եկեղեցի կառուցելիս, երբ տեսնում են մեր ժողովրդին մշակույթ ստեղծելիս, այն ժամանակ հարգանք են ունենում մեր հանդեպ: Ես հիշում եմ այս պահին, երբ մեկ ճաշկերույթի ընթացքում, մի 11 տարեկան Հայ մանուկ ելույթ ունեցավ Կոմիտաս վարդապետից և՝ նաև միջազգային հեղինակներից կտորներ ընծայեց մեր ժողովրդին, դարձա իմ կողքին կանգնած եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նախկին քարտուղարին, որ միջազգային մի դեմք էր, որ հիացումով, առանց բառեր իմանալու երաժշտության միջից այդ հացի համն էր ճաշակում, ինքը լինելով օտար, կենտրոնական Ամերիկայից մի անձ: Ես ասացի. «Այս հացի հացթուխը՝ Կոմիտաս վարդապետը, հենց այստեղ՝ Գերմանիայում է սովորել և իր երաժշտական արվեստի ձեռք բերած առավելությունները, հմտությունները, կարողությունը գործածել է, մաքրել և բյուրեղացրել է օտար ազդեցություններից ձերբազատել հայի հոգու բխումը եղող երաժշտությունը, և այսօր այս երեխայի երաժշտության միջից այդ հոգին իբրև հաց բաժանվում է ժողովրդին»:

Մենք այսօր կարիքն ունենք այդ հացի նաև Հայաստանում: Մեր ժողովուրդը կարող է լինել նյութապես հարուստ, դա ժամանակի պայմանների և գործի ուժգնությունից ու հարատևությունից կախված է: Գերմանիան, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ սրանից 50 տարիներ առաջ, ամբողջությամբ քանդվել էր, ինչպես վերականգնվեց, և աշխարհում հատկապես Եվրոպայում, ամենեն առաջնային դիրք գրավող տնտեսական ուժ ունեցող երկիրն է դարձել: Բայց նյութական հարստության մեջ հոգով աղքատ չմնանք, այս է պատգամը մեր հովվապետական այս այցելության: Մեր զավակներն էլ վաղը իրենց աշխատանքով կարող են շատ լավ պայմաններ ձեռք բերել նյութական կյանքի հետ կապված: Բայց ինչ պիտի անենք այդ ամբողջ հարստությունը, եթե Քրիստոսի հացից՝ մեր եկեղեցու մատուցվածքով մատուցված հացից զուրկ մնանք, իբրև ժողովուրդ:

Ես այս պահին իմ երախտագիտությունը հայտնելով առ Աստված վասն հավատի և վասն կենաց հացի, որից ես պատառիկներ տեսա Գերմանիայի և Եգիպտոսի մեջ, այսօր ես կոչ եմ անում Ձեզ, սիրելի եղբայրներ և քույրեր, որ կարողանաք ձեր կյանքում, մեր հայրենիքում, մեր Մայր Հայաստանում, եկեղեցուց եկած, Ավետարանից մեզ ճառագայթող այդ լույս հացը

առատացնե մեր կյանքից ներս: Եվ մենք, սիրելի հոգևոր եղբայրներս, միաբաններս Մայր Աթոռի և դուք սաներ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, մենք ենք այսօրվա հացթուխները, մենք է, որ այս հացը պիտի բաժաննենք ժողովրդին, մենք է, որ մեր կյանքով՝ կյանքի օրինակով, մեր խոսքի անկեղծությամբ և մեր գրի զորությամբ ու մեր գործի ուժգնությամբ պիտի տանք ժողովրդին այս հացից պատառիկներ: Եվ այս է այն գեղեցիկ առաքելությունը, այն կենսական առաքելությունը, անհետաձգելի առաքելությունը, որին կոչված է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ ամենից բարձր պատասխանատվություն ունեցող անձից մինչև ամենախոնարհ նկատված պարտավորությունը ստանձնող անձը:

Եկե՛ք, այդ հացը մեր կյանքում առատացնենք, թարմացնենք, որպեսզի կարողանանք այն թարմորեն և առատորեն փոխանցել մեր ժողովրդին և ասել. «Ո՛վ Տեր Հիսուս Քրիստոս, եթե Դու ես կյանքի հացը, ինչպես մենք հավատում ենք, այդ հացից մի պատառը դարձրու ինձ, որ ես էլ դառնամ մի պատառ այդ հացից՝ Աստծու փառքի, իմ ժողովրդի պատվի և մեր եկեղեցու պայծառության համար, հավիտյանս հավիտենից. Ամեն»: